



ՅԵՒՏԵՆ ՊԵՐԱԾ ԽՆՁՈՐԻՆ ՆԱՎԱԾ

Մին շահիլ տղա քյինամ ա կյետին դրազեն իրեսը լուվանում, տըեսնում կյետը մին խնձոր քշած պիրում ա: Սըեռքը մըեկնում ա, խնձորը փռնում, օտում: Մինգյել մտածում ա, թա պա էս խնձորին հախը տուլե՞, վըեր կերե: Կյետնըյեր քյինամ ա, վըեր տրա բաղը քթենա, հախը տա, ետ տըեռնա:

Շատ ա քյինամ, թա՝ խրեզյ, հսնում ա մին բաղ՝ հենց լիհան կյետեն կոխկեն: Նի յա մննում, դարադուլշոն ասում.—Էս բազան կյետը մին խնձոր ա քշած պերալ, փռնալ ըմ, կերալ, հախը հիշքա՞ն ա, ասե, տամ: Դարադուլշին թա՝ ես կարել չը՛մ ասեմ, խազայինն ա դյուդում:

Էտ տղան քյինամ ա շոռ կյամ, բազեն խազայինը քթենում, ասում.—Բաղետ մին խնձորը կյետը պերալ ա տուլըեր, ճիրան տուլ ը՛մ կալալ, առանց հախը տալի կերալ, կյինն ասե, տամ: Խազայինը թա՝ կարել չըմ ասեմ, բաղը թաքավըերենն ա, քյինամ թաքավըերեն անա հըրցըրու:

Տա քյինամ ա թաքավըերեն էլ ասում, թաքավըերը հըրցնում ա:—Տու փսակված ը՞ս, թա աղափի: Էտ տղան թա՝ աղափի ըմ: Թաքավըերն ասում ա:—Մին ախճիգլ օնըեմ, համ քոռ ա, համ՝ քոռ, համ էլ՝ կոնդ: Թա ըինըկանըս նհետ կըփսակվըես, խնձորին կյինը յոր կօնըեմ, թա չէ՝ քեզ ինի, հարկավըեր չի: Էտ տղան կարում չի իրեսա անց կենա, մտկումն ասում ա՝ փսըկվըլական ըմ, տըեսնամ սրա վերշը հինչ ա տըեռնում:

Փսակվում ա, ախճիգլը տանում տոն, տըհսնում վըել քառ ա,
վըել՝ քոռ, վըել էլ՝ կոնդ, շատ զաշանգի էլ ախճիգլ ա, հենց ա
լի՞չ մ մին հուլրդյ-մալադյ ինի; Ետ կյամ ա թաքավըերեն կոշտը,
ասում.—Թաքավըերն ապրած կենա, պատու լիճա ասում ըս՝ ախ-
ճիգլը համ քոռ ա, համ՝ քառ, համ էլ՝ կոնդ, վըել նա յա, վըել՝
նա, վըել էլ՝ նա; Թաքավըերն ասում ա.—Ախճիգլը քոռ ա, վըեր
հալա տհիսը տըհսալ շի, քառ ա, վըեր հալա հըսարան տհիս շի նկալ, վըեր
իտի հալալ ծըծկեր ըս, տրա հետե յէլ քեզ ըմ տուվալ

